ՆԱԽԱԳԻԾ
երկրորդ ընթերցում

Կ-054-28.09.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. *Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 88-րդ հոդվածի 1-ին մասում և 1-ին մասի աղյուսակի վերջին տողում «2403 99 90 090» թիվը փոխարինել «2404 11 000 9» թվով և աղյուսակի ԱՏԳ ԱԱ 2403 ծածկագրին վերաբերող տողից հանել «(բացառությամբ 2403 99 90 090)» բառերը:*

Հոդված 2. Օրենսգրքի 390-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ մասերով» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. ԱՏԳ ԱԱ 3303, 3304, 3305, 3401 ծածկագրերին դասվող՝ մինչև 2 գրամ զտաքաշ կամ 2 միլիլիտր ծավալ ունեցող ապրանքները (այդ թվում՝ փորձանմուշները) ենթակա չեն դրոշմապիտակներով դրոշմավորման:»:

Հոդված 3. Օրենսգրքի 391-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Դրոշմավորման պարտավորություն կրող անձի կողմից որպես գրավի առարկա գրավառուին հանձնված՝ դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների՝ մինչև սեփականության իրավունքի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելը դրոշմավորման պարտավորությունը կրում է գրավատուն: Գրավի առարկա հանդիսացող՝ դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների սեփականության իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է գրավառուն:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Սույն գլխի կիրառության իմաստով Հայաստանի Հանրապետությունում դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող են համարվում նաև դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքները այլ կերպ տարայավորող (փաթեթավորող, շշալցնող) կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ սույն մասում նշված դեպքի:

Մանրածախ առևտրի ոլորտում դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքներ օտարող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը դրոշմավորման պարտավորություն չեն կրում, եթե այդ ապրանքների նոր տարայով տարայավորումը (փաթեթավորումը, շշալցումը) կատարվում է օտարման պահին կամ այդ ապրանքների փաթեթավորումն իրականացվում է կշռող սարքի օգտագործմամբ իրականացվող առևտրային գործարքների ժամանակ:»:

Հոդված 4. Օրենսգրքի 393-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել և լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) հայտը և (կամ) հաշվետվության ձևը ներկայացվել են հարկային մարմնի սահմանած լրացման կարգերի պահանջների խախտմամբ:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Հարկային մարմինը հայտը չեղյալ է համարում՝

1) ներկայացված հայտից հրաժարվելու վերաբերյալ հարկ վճարողի դիմումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

2) հայտի բավարարման օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները հարկ վճարողի կողմից չստանալու դեպքում:»,

3) 7-րդ և 8-րդ մասերը «ապրանքների օտարումն» բառերից հետո լրացնել «ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերով,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով.

«10. Սույն գլխով նախատեսված էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարման կարգը սահմանում է հարկային մարմինը:»:

Հոդված 5. Օրենսգրքի 394-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասի կիրառման առումով դրոշմավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ շշալցված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված) դրոշմավորման ենթակա ապրանքի միավորի վրա, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ նշված դեպքի:»,

2) 2-րդ և 3-րդ մասերը «դրոշմավորումը և» բառերից հետո, իսկ 7-րդ մասում «որոնց գծով» բառերից հետո լրացնել «ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասում «սահմանում են հարկային և (կամ) մաքսային մարմինները» բառերը փոխարինել «սահմանում է հարկային մարմինը» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 396-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Չօգտագործված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները վերադարձվում են մինչև դրանց ստացման ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին օրը ներառյալ:»,

2) 2-րդ և 3-րդ մասերը «դրոշմապիտակները» բառերից հետո լրացնել «(բացառությամբ դրոշմավորման ընթացքում խոտանված *ակցիզային դրոշմանիշերի և (կամ)* դրոշմապիտակների)» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 422-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «(այդ թվում՝ կորած)» բառերը և նույն մասում «չընդունվելու» բառից հետո լրացնել «կամ կորստի» բառերը, իսկ «վնասված» բառից հետո լրացնել «(բացառությամբ խոտանված *ակցիզային դրոշմանիշերի և (կամ)* դրոշմապիտակների)» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-5-րդ մասերով.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված նախորդ հարկային տարին որոշվում է՝

1) չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը Օրենսգրքի 396-րդ հոդվածի՝ համապատասխանաբար 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում՝ որպես հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտի կազմման ամսաթիվը ներառող հարկային տարվան նախորդող հարկային տարին,

2) Օրենսգրքի 396-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու դեպքում՝ որպես հարկային մարմնի կողմից՝ Օրենսգրքի 396-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված վավերապայմաններին համապատասխանության (անհամապատասխանության) մասին որոշման ընդունման ամսաթիվը ներառող հարկային տարվան նախորդող հարկային տարին,

3) ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կորստի դեպքում՝ որպես ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները կորած համարվելու վերաբերյալ հարկ վճարողի դիմումի (գրության) հիման վրա հարուցված՝ *հարկային մարմնի ղեկավարի* կողմից լիազորած ստորաբաժանման ղեկավարի կողմից ընդունված վարչական ակտի կազմման ամսաթիվը ներառող հարկային տարվան նախորդող հարկային տարին:

3. Նախորդ հարկային տարվա ընթացքում հարկ վճարողի կողմից ակցիզային դրոշմանիշեր և (կամ) դրոշմապիտակներ ստացված չլինելու դեպքում, ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց կորստի դեպքում՝ տուգանքը հաշվարկվում է յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար՝ 50 դրամ:

4. Անկախ սույն հոդվածի դրույթներից, մինչև սույն հոդվածով սահմանված դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի վարչական ակտի ընդունումը՝ սահմանված ժամկետում չվերադարձված՝ չօգտագործված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները վերադարձնելու և հարկային մարմնի կողմից դրանց հետընդունման ակտը վարույթ իրականացնող մարմին ներկայացվելու դեպքում դրանց մասով յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար հաշվարկվում և գանձվում է տուգանք 100 դրամի չափով, բայց ոչ ավելի, քան 100 հազար դրամը:

5. Սույն գլխի իմաստով խոտանված են համարվում դրոշմավորման ընթացքում վնասված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները, որոնց քանակը չի գերազանցում օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ ներկայացված վերջին հաշվետվությունում նշված՝ օգտագործված դրոշմապիտակների քանակի 0,5 տոկոսը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 423-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «վնասված» բառից հետո լրացնել «կամ խոտանված կամ դրոշմավորման ոչ ենթակա ապրանքի վրա փակցված և ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով գրանցված» բառերով,

2) 2-րդ մասում «390-րդ հոդվածում նշված՝ պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանքները պիտանիության (պահպանման) ժամկետի ընթացքում չօտարվելու և այդ ժամկետի ավարտից հետո Կառավարության սահմանած կարգով դուրս գրվելու դեպքում այդ ապրանքների վրա փակցված» բառերը փոխարինել «389-րդ և 390-րդ հոդվածներում նշված ապրանքները Կառավարության սահմանած կարգով դուրս գրվելու դեպքում այդ ապրանքների վրա փակցված ակցիզային դրոշմանիշերի և» բառերով,

3) 3-րդ մասում «1-ին և 2-րդ» բառերը փոխարինել «1-ին, 2-րդ և 4-րդ» բառերով,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Օրենսգրքին համապատասխան դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող ապրանքների, ինչպես նաև անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսված ապրանքների դրոշմավորման դեպքում, դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողից, որպես փոխհատուցում, գանձվում են այդ դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տպագրության համար հարկային մարմնի կատարած ծախսերը, եթե այդ ապրանքների մաքսային հայտարարագրում (Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ արտահանելու դեպքում՝ տարանցման մաքսային հայտարարագրում) նշված են դրոշմանիշերի (դրոշմապիտակների) թիվը, սերիաները, հերթական համարները (այդ թվում՝ միջակայքերով) և դրանց ստացման հաշիվ-վավերագրի համարն ու ամսաթիվը:»:

Հոդված *10.* Օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասը «սահմանված կարգով» բառերից հետո լրացնել «ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերը, իսկ «եթե» բառից հետո լրացնել «դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում նշված դրոշմավորման ենթակա ապրանքի ընդհանուր արժեքը և (կամ)» բառերով:

Հոդված *11.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: *Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտը հարկային մարմինը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:*

ՆԱԽԱԳԻԾ

երկրորդ ընթերցում

Կ-054-28.09.2021-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 88-րդ հոդվածի 1-ին մասում և 1-ին մասի աղյուսակի վերջին տողում «2403 99 90 090» թիվը փոխարինել «2404 11 000 9» թվով և աղյուսակի ԱՏԳ ԱԱ 2403 ծածկագրին վերաբերող տողից հանել «(բացառությամբ 2403 99 90 090)» բառերը:

~~**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)~~**Հոդված 2**. Օրենսգրքի 390-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ մասերով» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. ԱՏԳ ԱԱ 3303, 3304, 3305, 3401 ծածկագրերին դասվող՝ մինչև 2 գրամ զտաքաշ կամ 2 միլիլիտր ծավալ ունեցող ապրանքները (այդ թվում՝ փորձանմուշները) ենթակա չեն դրոշմապիտակներով դրոշմավորման:»:

Հոդված ~~2~~**3.** Օրենսգրքի 391-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Դրոշմավորման պարտավորություն կրող անձի կողմից որպես գրավի առարկա գրավառուին հանձնված՝ դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների՝ մինչև սեփականության իրավունքի՝

օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելը դրոշմավորման պարտավորությունը կրում է գրավատուն: Գրավի առարկա հանդիսացող՝ դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների սեփականության իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է գրավառուն:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Սույն գլխի կիրառության իմաստով Հայաստանի Հանրապետությունում դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող են համարվում նաև դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքները այլ կերպ տարայավորող (փաթեթավորող, շշալցնող) կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ սույն մասում նշված դեպքի:

Մանրածախ առևտրի ոլորտում դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքներ օտարող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը դրոշմավորման պարտավորություն չեն կրում, եթե այդ ապրանքների նոր տարայով տարայավորումը (փաթեթավորումը, շշալցումը) կատարվում է օտարման պահին կամ այդ ապրանքների փաթեթավորումն իրականացվում է կշռող սարքի օգտագործմամբ իրականացվող առևտրային գործարքների ժամանակ:»:

Հոդված ~~3~~4. Օրենսգրքի 393-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել և լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) հայտը և (կամ) հաշվետվության ձևը ներկայացվել են հարկային մարմնի սահմանած լրացման կարգերի պահանջների խախտմամբ:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Հարկային մարմինը հայտը չեղյալ է համարում՝

1) ներկայացված հայտից հրաժարվելու վերաբերյալ հարկ վճարողի դիմումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

2) հայտի բավարարման օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները հարկ վճարողի կողմից չստանալու դեպքում:»,

3) 7-րդ և 8-րդ մասերը «ապրանքների օտարումն» բառերից հետո լրացնել «ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերով,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով.

«10. Սույն գլխով նախատեսված էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարման կարգը սահմանում է հարկային մարմինը:»:

Հոդված ~~4~~5. Օրենսգրքի 394-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասի կիրառման առումով դրոշմավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ շշալցված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված) դրոշմավորման ենթակա ապրանքի միավորի վրա, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ նշված դեպքի:»,

2) 2-րդ և 3-րդ մասերը «դրոշմավորումը և» բառերից հետո, իսկ 7-րդ մասում «որոնց գծով» բառերից հետո լրացնել «ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերով:

Հոդված ~~5~~6. Օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասում «սահմանում են հարկային և (կամ) մաքսային մարմինները» բառերը փոխարինել «սահմանում է հարկային մարմինը» բառերով:

Հոդված ~~6~~7. Օրենսգրքի 396-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Չօգտագործված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները վերադարձվում են մինչև դրանց ստացման ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին օրը ներառյալ:»,

2) 2-րդ և 3-րդ մասերը «դրոշմապիտակները» բառերից հետո լրացնել «(բացառությամբ դրոշմավորման ընթացքում խոտանված *ակցիզային դրոշմանիշերի և (կամ)* դրոշմապիտակների)» բառերով:

Հոդված ~~7~~8. Օրենսգրքի 422-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «(այդ թվում՝ կորած)» բառերը և նույն մասում «չընդունվելու» բառից հետո լրացնել «կամ կորստի» բառերը, իսկ «վնասված» բառից հետո լրացնել «(բացառությամբ խոտանված *ակցիզային դրոշմանիշերի և (կամ)* դրոշմապիտակների)» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-5-րդ մասերով.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված նախորդ հարկային տարին որոշվում է՝

1) չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը Օրենսգրքի 396-րդ հոդվածի՝ համապատասխանաբար 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում՝ որպես հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտի կազմման ամսաթիվը ներառող հարկային տարվան նախորդող հարկային տարին,

2) Օրենսգրքի 396-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու դեպքում՝ որպես հարկային մարմնի կողմից՝ Օրենսգրքի 396-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված վավերապայմաններին համապատասխանության (անհամապատասխանության) մասին որոշման ընդունման ամսաթիվը ներառող հարկային տարվան նախորդող հարկային տարին,

3) ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կորստի դեպքում՝ որպես ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները կորած համարվելու վերաբերյալ հարկ վճարողի դիմումի (գրության) հիման վրա հարուցված՝ ~~Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի~~ հարկային մարմնի ղեկավարի կողմից լիազորած ստորաբաժանման ղեկավարի կողմից ընդունված վարչական ակտի կազմման ամսաթիվը ներառող հարկային տարվան նախորդող հարկային տարին:

3. Նախորդ հարկային տարվա ընթացքում հարկ վճարողի կողմից ակցիզային դրոշմանիշեր և (կամ) դրոշմապիտակներ ստացված չլինելու դեպքում, ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունվելու կամ դրանց կորստի դեպքում՝ տուգանքը հաշվարկվում է յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար՝ 50 դրամ:

4. Անկախ սույն հոդվածի դրույթներից, մինչև սույն հոդվածով սահմանված դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերադարձը սահմանված ժամկետներից ուշացնելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի վարչական ակտի ընդունումը՝ սահմանված ժամկետում չվերադարձված՝ չօգտագործված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները վերադարձնելու և հարկային մարմնի կողմից դրանց հետընդունման ակտը վարույթ իրականացնող մարմին ներկայացվելու դեպքում դրանց մասով յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի և (կամ) դրոշմապիտակի համար հաշվարկվում և գանձվում է տուգանք 100 դրամի չափով, բայց ոչ ավելի, քան 100 հազար դրամը:

5. Սույն գլխի իմաստով խոտանված են համարվում դրոշմավորման ընթացքում վնասված ակցիզային դրոշմանիշերը և (կամ) դրոշմապիտակները, որոնց քանակը չի գերազանցում օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ ներկայացված վերջին հաշվետվությունում նշված՝ օգտագործված դրոշմապիտակների քանակի 0,5 տոկոսը:»:

Հոդված ~~8~~9. Օրենսգրքի 423-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «վնասված» բառից հետո լրացնել «կամ խոտանված կամ դրոշմավորման ոչ ենթակա ապրանքի վրա փակցված և ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով գրանցված» բառերով,

2) 2-րդ մասում «390-րդ հոդվածում նշված՝ պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանքները պիտանիության (պահպանման) ժամկետի ընթացքում չօտարվելու և այդ ժամկետի ավարտից հետո Կառավարության սահմանած կարգով դուրս գրվելու դեպքում այդ ապրանքների վրա փակցված» բառերը փոխարինել «389-րդ և 390-րդ հոդվածներում նշված ապրանքները Կառավարության սահմանած կարգով դուրս գրվելու դեպքում այդ ապրանքների վրա փակցված ակցիզային դրոշմանիշերի և» բառերով,

~~2)~~ 3) 3-րդ մասում «1-ին և 2-րդ» բառերը փոխարինել «1-ին, 2-րդ և 4-րդ» բառերով,

~~3)~~ 4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Օրենսգրքին համապատասխան դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող ապրանքների, ինչպես նաև անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսված ապրանքների դրոշմավորման դեպքում, դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողից, որպես փոխհատուցում, գանձվում են այդ դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տպագրության համար հարկային մարմնի կատարած ծախսերը, եթե այդ ապրանքների մաքսային հայտարարագրում (Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ արտահանելու դեպքում՝ տարանցման մաքսային հայտարարագրում) նշված են դրոշմանիշերի (դրոշմապիտակների) թիվը, սերիաները, հերթական համարները (այդ թվում՝ միջակայքերով) և դրանց ստացման հաշիվ-վավերագրի համարն ու ամսաթիվը:»:

Հոդված ~~9~~10. Օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասը «սահմանված կարգով» բառերից հետո լրացնել «ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերը, իսկ «եթե» բառից հետո լրացնել «դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում նշված դրոշմավորման ենթակա ապրանքի ընդհանուր արժեքը և (կամ)» բառերով:

Հոդված ~~10~~11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտը հարկային մարմինը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-054-28.09.2021-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկու-թյունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**Հոդված 1**	Օրենսգրքի 390-րդ հոդվածում 4-րդ մաս լրացնելու հետ կապված առաջարկվում է համապատասխան փոփոխություն կատարել օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասում՝ բացառություն նախատեսելով նաև նույն հոդվածում լրացվող 4-րդ մասով սահմանմանվող դեպքերի մասով:	Ընդունվել է Նախագծի 1-ին (լրամշակված նախագծի 2-րդ) հոդվածը լրացվել է 1-ին կետով, որի համաձայն օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի «3-րդ մասում» բառերը փոխարինվել են «3-րդ և 4-րդ մասերով» բառերով:	Ընդունվել է
2.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**Հոդված 6, կետ 2** **Հոդված 7, կետ 1**	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետով և 7-րդ հոդվածի 1-ին կետով կատարվող փոփոխությունները կիրառել նաև խոտանված ակցիզային դրոշմանիշերի մասով՝ հաշվի առնելով, որ օրենսգրքի 422-րդ հոդվածում լրացվող 5-րդ մասով տրվող սահմանումը՝ նույն գլխի կիրառման իմաստով խոտանված համարվելու կանոնը, տրված է ակցիզային դրոշմանիշներ և դրոշմապիտակների համար:	Ընդունվել է Նախածի 6-րդ (լրամշակված նախագծի 7-րդ) հոդվածի 2-րդ կետում և 7-րդ (լրամշակված նախագծի 8-րդ) հոդվածի 1-ին կետում «խոտանված» բառից հետո լրացվել են «ակցիզային դրոշմանիշերի և (կամ)» բառերը:	Ընդունվել է
3	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**Հոդված 7, կետ 2**	Առաջարկվում է Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ կետով օրենսգրքի 422-րդ հոդվածում լրացվող 2-րդ մասի 3-րդ կետում առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի» բառերը փոխարինել «հարկային մարմնի ղեկավարի» բառերով	Ընդունվել է Նախագծի 7-րդ (լրամշակված նախագծի 8-րդ) հոդվածում՝ օրենսգրքի 422-րդ հոդվածում լրացվող 2-րդ մասի 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե» բառերը փոխարինվել են «հարկային մարմնի ղեկավարի» բառերով:	Ընդունվել է
4.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**Հոդված 8**	Օրենսգրքի 423-րդ հոդվածի 2-րդ մասով հնարավորություն է տրված դրոշմավորված ապրանքները պիտանիության (պահպանման) ժամկետի ընթացքում չօտարվելու դեպքում պիտանիության ժամկետը լրանալուց հետո Կառավարության սահմանած կարգով դուրս գրել և այդ դեպքում վճարել միայն դրոշմապիտակների տպագրության համար	Ընդունվել է Նախագծի 8-րդ (լրամշակված նախագծի 9-րդ) հոդվածը լրացվել է 2-րդ կետով, որի համաձայն՝ օրենսգրքի 423-րդ հոդվածի 2-րդ մասում «390-րդ հոդվածում նշված՝ պիտանիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանքները պիտանիության	Ընդունվել է

			կատարված ծախսերը: Առաջարկում ենք այդ դրույթները կիրառել նաև ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների նկատմամբ՝ սահմանելով, որ դրոշմավորված ապրանքները ոչ պիտանի համարվելու դեպքում կարող են Կառավարության սահմանված կարգով դուրս գրվել անկախ պիտանիության ժամկետից:	(պահպանման) ժամկետի ընթացքում չօտարվելու և այդ ժամկետի ավարտից հետո Կառավարության սահմանած կարգով դուրս գրվելու դեպքում այդ ապրանքների վրա փակցված» բառերը փոխարինվել են «389-րդ և 390-րդ հոդվածներում նշված ապրանքները Կառավարության սահմանած կարգով դուրս գրվելու դեպքում այդ ապրանքների վրա փակցված ակցիզային դրոշմանիշերի և» բառերով:	
5.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	**Հոդված 10**	Առաջարկում ենք օրենքի դրույթների կիրարկումն ապահովելու նպատակով սահմանել նախագծով նախատեսվող ենթաօրենսդրական ակտի ընդունման համապատասխան ժամկետ:	Ընդունվել է Նախագծի 10-րդ (լրամշակված նախագծի 11-րդ) հոդվածը լրացվել է նոր նախադասությամբ, որի համաձայն նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտը հարկային մարմինը պետք է ընդունի օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:	Ընդունվել է
6.	Հայաստանի Հանրապետության կառավարություն		Ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագրերի դասակարգման մասով ԵՏՀ խորհրդի որոշմամբ կատարված փոփոխություններով (ուժի մեջ է մտնելու 2022թ. հունվարի 1-ից) պայմանավարված առաջարկում ենք օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասում ԱՏԳ ԱԱ 2403 99 90 090 ծածկագիրը համապատասխանեցնել 2022թ. հունվարի 1-ից գործող ԱՏԳ ԱԱ ծածկագրին:	Ընդունվել է Նախագիծը լրացվել է նոր 1-ին հոդվածով, որի համաձայն օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասում և աղյուսակում ԱՏԳ ԱԱ 2403 99 90 090 ծածկագիրը փոխարինվել է ԱՏԳ ԱԱ 2404 11 000 9 ծածկագրով, իսկ նույն մասի աղյուսակից հանվել են «(բացառությամբ 2403 99 90 090)» բառերը:	Ընդունվել է